ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 45. Հարկային պարտավորության դադարումը

1. Հարկային պարտավորությունը դադարում է՝

1) երբ այն կատարվում է.

2) երբ սահմանվում է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման հարկային արտոնություն՝ ազատված կամ նվազեցված պարտավորության չափով.

3) երբ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի սնանկության գործը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվում է, և կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի գործունեությունը համարվում է դադարած,~~երբ կազմակերպության կամ ֆիզիկական անձի սնանկության գործը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվում է, և բացակայում է որևէ անձ, որը, Օրենսգրքի համաձայն, պատասխանատվություն է կրում հարկային պարտավորության կատարման համար.~~

4) երբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի սնանկության գործը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվում է, և վճռով ֆիզիկական անձը ազատվում է բոլոր պարտավորություններից բացառությամբ՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի,~~երբ այն դառնում է անհուսալի և անհուսալի դառնալուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, չի գանձվում.~~

5) երբ ֆիզիկական անձը մահանում է, բացառությամբ Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերի.

6) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում,

7) երբ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի երկու միլիոն դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների կատարման՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետից անցել է 5 տարի:

8) երբ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ երկու միլիոն դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների կատարման՝

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետից անցել է 7 տարի:

9) երբ մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձը չունի որևէ ժառանգ կամ ժառանգը (ժառանգները) հրաժարվել են ժառանգությունից և ֆիզիկական անձի մահվանից անցել է 5 տարի:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառության իմաստով՝ չկատարված հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե՝~~

~~1) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի հարկային պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի՝ գույք կամ եկամուտներ չունենալու, կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով.~~

~~2) կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ մեկ միլիոն դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի՝ գույք կամ եկամուտներ չունենալու, կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով, եթե բացակայում են անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին սնանկ ճանաչելու հիմքերը.~~

~~3) մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձը չունի որևէ ժառանգ կամ ժառանգը (ժառանգները) հրաժարվում են ժառանգությունից.~~

~~4) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման վրա անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը ստանում է պետական գրանցում, կամ անհատ ձեռնարկատերը հանվում է պետական հաշվառումից, կամ նոտարն ազատվում է պաշտոնից:~~

3. Հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է հարկային մարմինը:~~Անհուսալի հարկային պարտավորությունների մասով հարկային մարմինը վարում է առանձնացված հաշվառում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով դադարած անհուսալի հարկային պարտավորությունները հանվում են հաշվառումից: Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ~~

~~այլ հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է հարկային մարմինը։~~